գրիչը իւր յիշատակարանը թուագրում է ի միջի այլոց՝ «իսկ ի տեղւոյս տէրութեան թոռանց մեծին Պռոչա Ամիր–Հասանա եւ Ջումայլ», իսկ նրանք Պռոշի թոռնորդիքն են(1)։ Պռոշի «թոռն» է կոչուած Գեղարդի Յովհաննէս եպիսկոպոսը, որ ապրում էր 1475 թուին, Պռոշից մօտ 200 տարի յետոյ(2)։ Այդպէս էլ այստեղ «Դաւիթ որդի Շոթոռկայ» պէտք է հասկանալ համազօր «Դաւիթ Շոթոռկանց» արտայայտութեան, այսինքն իբրև ազգանուն։

Ապա տեսանք, որ Սանահնում խաչարձան կանգնող Դաւիթ իշխանի հօր անունը Գրիգոր է, ինչպէս Խծկոնից վանքի ՈԿԳ. թուականի արձանագրութեան Դաւիթ զօրավարի, և որովհետև սորա որդու անունն էլ Գրիգոր է, ինչպէս և Շոթքուկանց Դաւիթինը, պապի անունով և թոռը կոչուած, երկուսն էլ կապուած Սանահնի և Խծկոնից հետ, իրաւամբ եզրակացնել կարող ենք Դաւիթ Շոթոռկայ որդու, խաչարձան կանգնող Գրիգորի որդի Դաւիթ իշխանի եւ Խծկոնից Դաւիթ զօրավարի անձնաւորութեան նոյնութիւնը։

Դաւիթ Շոթոռկանցը ՈՁԵ. թուականին դեռ ևս կենդանի էր, երբ նորա հովանաւորած ազատներից Բռնաւորը եւ Տղատիկինը գրել են տալիս իրենց աւետարանը և նուիրում Տ. Աբաս եպիսկոպոսի եւ Պաւղոս վարդապետի ձեռքով Խծկոնից վանքին։ Չորս տարի յետոյ՝ ՈՁԹ (=1240) թուականին նոյն ամուսինները նուիրում են մի այլ ևս և արձանագրել տալիս Ս. Սարգսի պատին. բայց այստեղ Բռնաւորը չէ յիշում այլ ևս Դաւիթ իշխանին, այլ նորա որդի «կարոն» Գրիգորին միայն, որի «ողորմութեամբ» նա կատարում է իւր ընծայաբերութիւնը։ Այստեղից եզրակացնել կարող ենք, թէ արդէն մեռած էր Դաւիթ և իշխանութիւնն անցած նորա աւագ որդուն(1)։ Այնուհետև չունինք տեղեկութիւն այս տոհմի մասին։

Պատկ. 13

(1) Մեր «Խաղբակեանք». 200—202։
(2) Անդ. 232։

(1) Ըստ այսմ Շոթռկանց տոհմի հետեւեալ ծիւղազրութիւնը կը ստանանք.

Շոթռիկ *կամ* **Շոթռռիկ**

⋮

Դաւիթ. Վաճրիկ *(կինը?)*. **Սարգիս** եւ **Ճէրպարիճ**.

/

Գրիգոր, **Գայլ-Ճէրպարիճ** *(մի՞ անձն)*։

/

Սմբատ, **Արջուկ**, **Արզուխարուն**։